ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-608-31.05.2023-ԱոՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 7-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին հոդվածով.

<<Հոդված 7.1. **Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը բնակչության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում**

1. Հասարակական կարգի պահպանման, ուսումնական և գիտական, պացիենտների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու, ինչպես նաև պացիենտների այլ իրավաչափ շահերի պաշտպանության նպատակներով բնակչության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում կարող են կառավարության սահմանած կարգով օգտագործվել տեսալուսանկարահանող սարքեր:

2. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ֆունկցիոնալ ախտորոշիչ կաբինետներում, միջամտությունների սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում և սանհանգույցներում տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումն արգելվում է:

3. Տեսալուսանկարահանող սարքեր օգտագործելու դեպքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները իրենց կազմակերպության տարածքի տեսանելի հատվածներում տեղադրում են ~~համապատասխան նախազգուշական նշան~~ իրազեկման ցուցանակներ: ~~Համապատասխան նախազգուշական նշանը~~ Իրազեկման ցուցանակները տեղադրվում են այնպես, որ տեսանելի լինի մինչև տեսահսկման տարածք մտնելը:

4. Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործմամբ ստացված տվյալները կարող են պահպանվել, սույն հոդվածի 1-ին մասով նշված կառավարության սահմանած կարգին համապատասխան:

5. Եթե հայտնաբերվում խախտում, ապա տեսանյութերը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում պահվում են մինչև խախտման դեպքի քննության (այդ թվում՝ բողոքարկման վարույթի) կամ ծառայողական քննության ավարտը, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ: Պացիենտների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու դեպքում տեսանյութերը պահվում են առնվազն մեկ ամիս, բայց ոչ ավելի, քան վեց ամիս:

6. Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործման արդյունքում ստացված տվյալները տրամադրվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:>>:

Հոդված 2 . Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից: